ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

9965
22 OCT 2019
14.05

«21» հոկտեմբեր 2019թ. No 3045 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103142019 առ 11.10.2019թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 6 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

21.10.2019

X

VERIFIED OCSP 21.10.2019 17:20:59 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2019 թ. հոկտեմբերի 21 - ի N 3045 – Ա հրամանի

## ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
## ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ազիմակ | ազիթրոմիցին | դեղապատիճներ | 250մգ; (6/2x3/) բլիստերում | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 18834 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 2 | Ազիմակ | ազիթրոմիցին | դեղապատիճներ | 500մգ; (3/1x3/) բլիստերում | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 18835 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 3. | Զոմետա | զոլեդրոնաթթու (զոլեդրոնաթթվի մոնոհիդրատ) | լուծույթ կաթիլաներարկման | 0,04մգ/մլ; 100մլ ապակե սրվակ | Նովարտիս Ֆարմա Շտեյն ԱԳ, Շաֆհաուզերշտրասե, 4332 Շտեյն- երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման | Շվեյցարիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 18836 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հսկող, Ֆրեզենիուս Կաբի Ավստրիա ԳմբՀ, Հաֆներշտրասե 36, 8055 Գրաց, Ավստրիա-բալք արտադրող, առաջնային փաթեթավորող | | | | | | |
| 4. | Միկոսեպտին | ունդեցիլենաթթու, ցինկ-ունդեցիլենատ | քսուք արտաքին կիրառման | 1500մգ+6000մգ; 30գ ալյումինե պարկուճ | Զենտիվա, կ.ս., Ու կաբելովնի 130, 102 37 Պրահա 10, Դոլնի Մեխոլուպի | Չեխիայի Հանրապետություն | ԷՍԱԻ Սանոֆի Ռուսաստան,125009, Մոսկվա,Տվերսկայա փ. 22 | Ռուսաստան | ԱԴ | 18837 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 5. | Քոլդրեքս | պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), տերպին հիդրատ, ասկորբինաթթու | դեղահատեր | 500մգ+25մգ+5մգ+20մգ+30մգ; (12/1x12/) բլիստերում | ՍմիթԿլայն Բիչեմ Ս.Ա., Ստրա. դե Ախալվիր, ԿՄ-2500-28806, Ալկալա դե Էնարես, Մադրիդ-փաթեթավորող, բաց թողնման հսկող, ԳլաքսոՍմիթԿլայն Դունգարվան ՍՊԸ, | Իսպանիա | ԳլաքսոՍմիթԿլայն Քոնսումեր Հելթքեյր (ՄԹ) Թրեյդինգ Լիմիտեդ, 980 Գրեյթ Ուեստ ճ., Բրենտֆորդ, Միդլսեքս ՏՎ8 9ԳՍ | Միացյալ Թագավորություն | ԱԴ | 18838 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Նոքբրաք, Դունգարվան, Ուոթերֆորդ Կո., Իռլանդիա-բալք արտադրող, որակի հսկող | | | | | | |
| ճ. | Նիկորետե | նիկոտին | ցողաշիթ | 13,6մգ/մլ; (1) պլաստիկե տարա 13,2մլ(150 դեղաչափ) ցողացիր սարքով, (2) պլաստիկե տարա 13,2մլ(150 դեղաչափ) ցողացիր սարքով | ՄքՆեյլ ԱԲ, Նորբրոպլատսեն 2, Հելսինգբորգ, 25109 | Շվեդիա | Ջոնսոն և Ջոնսոն ՍՊԸ, 121614, Մոսկվա, Կրիլատսկայա փ. 17, 2 | Ռուսաստան | ԱԴ | 18839 11.10.2019 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |